ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մարջիկ Վարդանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Մարջիկ Վարդանյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 10-րդ՝ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Նելլի Ներսիսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Նելլի Ներսիսյանը:

Որոշեցին. - 11-րդ՝ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Նելլի Ներսիսյան /նախագահ/
2. Անահիտ Հովակիմյան/անդամ/
3. Թեհմինե Խաչատրյան /անդամ/
4. Անահիտ Թովմասյան /անդամ/
5. Մանուկյան Հայկուհի/անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Մարջիկ Վարդանյանը՝ նշելով, որ աշակերտներն այս տարի արդեն սովորում են ավագ դպրոցում և պետք է առավել ուշադիր ու պատասխանատու լինեն, որպեսզի կարողանան կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում: Նա նաև տեղեկացրեց, որ նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա

աշխատանքային ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Նելլի Ներսիսյան

Քարտուղար՝ Անահիտ Հովակիմյան